

ԱՆՆԱ ԴԱՆԻՔԵԿՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՇԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Սույն հոդվածում հետազոտվում են ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունում ամրագրված հատուկ հիմքերի ուժով առևտրային կաշառքի համար քրեական պատասխանատվությունից ազատվելու հետ առնչվող հիմնահարցերը: Հոդվածում վերլուծվում են նշված արարքը կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը նախատեսող խրախուսական նորմի սոցիալական նշանակությունը և սահմանման նպատակը, դրա կիրառման պայմանները, ինչպես նաև բացահայտվում են դրա հետ կապված արդիական հիմնախնդիրները: Վերոգրյալի հիման վրա ձևակերպվում են գործնական առաջարկություններ՝ վերլուծվող նորմի ներգործության արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ:

Հիմնարար քառեր - առևտրային կաշառք, քրեական պատասխանատվություն, հատուկ հիմք, խրախուսական նորմ:

Կաշառատվության համար մեղավոր անձին որոշակի պայմանների առկայությամբ քրեական պատասխանատվության չենթարկելու գաղափարն արտացոլված էր դեռևս խորհրդային քրեական օրենսդրությունում: ՀՀ գործող քրեական օրենսգրքում այդ ավանդույթը շարունակվել է, ընդ որում՝ այդպիսի մոտեցումը տարածվել է ոչ միայն հանրային, այլև մասնավոր հատվածում տեղի ունեցող կաշառման դեպքերի վրա: Այսպես, ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունում ամրագրված է խրախուսական նորմ, որի վերջին խմբագրության համաձայն՝ առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն (05.06.2014թ. ՀՕ-14-Ն օրենք):

Վերոհիշյալ նորմի ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է պարզել դրա սոցիալական նշանակությունը և սահմանման նպատակը: Ինչպես հայտնի է, կաշառակերությունը լատենտային հանցագործություն է, որը գործնականում շատ դժվար է բացահայտվում: Այսպես, իրական կյանքում կաշառման դեպքերն անհամեմատ ավելի շատ են,

քան դրանց հանդիպում ենք իրավակիրառ պրակտիկայում: Բարձր լատենտայնությունը պայմանավորված է նրանով, որ երկու կողմն էլ շահագրգռված չեն հանցանքի բացահայտման մեջ, քանի որ ինչպես կաշառատուի, այնպես էլ կաշառք ստացողի գործողությունները ուղղված են միևնույն հանցավոր արդյունքին, երկուսն էլ դրա արդյունքում բավարարում են իրենց ապօրինի շահերը և ենթակա են քրեական պատասխանատվության: Հիմք ընդունելով դա, քրեական պատասխանատվությունից ազատվելու հատուկ հիմք սահմանելով՝ պետությունը խթանում է կաշառք տված անձի ակտիվ դրական վարքագիծը՝ դրդելով նրան բացահայտելու կատարված հանցանքը: Այդ կապակցությամբ նշվել է, որ «վերլուծվող հանգամանքի սոցիալական իմաստը ոչ այդքան մեղայականով ներկայանալու մեջ է, որը ըստ ընդհանուր կանոնի, հանդիսանում է պատասխանատվությունը մեղմացնող, այլ ոչ թե բացառող հանգամանք, և ոչ էլ հումանիզմի դրսևորման մեջ, այլ ավելի շուտ՝ դիմողին այն բանի համար խրախուսելու մեջ, որ նա օգնել է մեղկացնել ավելի վտանգավոր հանցագործին՝ կառավարչական գործառույթների կատարման համար վարձատրություն ստացած անձին»¹: Այսինքն, տվյալ նորմն իրենից ներկայացնում է խրախուսական սանկցիա, որպիսի խրախուսանքը պետությունը կիրառում է կաշառատուի նկատմամբ՝ կաշառք ստացողի մեղակցմանն աջակցելու հա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մար՝ համարելով, որ դրանով նա քավում է իր մեղքը:

Համեմատելով ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված նորմի ներկայիս և նախկին խմբագրությունները՝ հարկ է նշել, որ օրենսդիրն էապես փոփոխել է դրա բովանդակությունը՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի խստացման առումով: Այսպես, մինչև 05.06.2014թ. ՀՕ-14-Ն օրենքով համապատասխան օրենսդրական փոփոխություն կատարելը որպես այդպիսի հիմք նախատեսված էր երկու հանգամանք՝

ա) կաշառքի շորթումը,

բ) կատարված արարքի մասին 3-օրյա ժամկետում իրավապահ մարմիններին կամավոր հայտնելը: Ընդ որում, ի տարբերություն գործող խմբագրության՝ վերլուծվող նորմի կիրառման համար չէր պահանջվում նշված երկու պայմանների միաժամանակյա առկայություն:

Կաշառքի շորթման դեպքում հաշվի էին առնվում հանցանքի կատարման իրադրության առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ կաշառատուն, խիստ կարիք ունենալով, ծառայողի որոշակի վարքագծում գործում է իր կամքը ճնշող ազդեցության ներքո՝ իր օրինական շահերի խախտումը կանխելու նպատակով: Այդ հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հարցի կապակցությամբ իրավաբանական գրականությունում արտահայտվել են տարբեր դիրքորոշումներ: Որոշ հեղինակներ դրական են գնահատում այդպիսի մոտեցումն այն պատճառաբանությամբ, որ շորթման փաստի հետևանքով կաշառատուն հայտնվում է բարդ իրադրությունում, որը սահմանափակում է նրա գործողությունների ազատությունը, և այդ դեպքում մեղավորը հանցավոր ճանապարհ է ընտրում հարկադրանքի ազդեցության տակ²: Նշված տեսակետի կողմնակիցները դիտարկում են շորթման պարագայում կաշառք տալը՝ որպես կաշառատուի յուրահատուկ, ինքնատիպ պաշտպանություն հանցավոր ոսնձգությունից³: Այլ քրեագետներ դեմ են արտահայտվում՝ նշելով, որ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը որոշելիս պետք չէ դա կախվածության մեջ դնել այդ հանցանքում այլ անձի կատարած դերից, և այդպիսի հիմք կարող են հանդիսանալ միայն հանցագործությունը կատարելուց հետո առաջացած հանգա-

մանքները⁴:

Մեր կարծիքով, կաշառքի շորթումը որպես քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմք սահմանելիս կաշառատուի նկատմամբ գործադրվող հոգեկան հարկադրանքի նշանակությունը գերազնահատվում էր՝ նկատի ունենալով, որ այն ամբողջությամբ չի գրկում նրան իր գործողությունները դեկլարելու հնարավորությունից: ՀՀ քր. օր.-ի 45-րդ հոդվածի դրույթների ուժով՝ նույն պայմաններում, այլ տեսակի հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ծայրահեղ անհրաժեշտության կանոններով (ՀՀ քր. օր.-ի 44-րդ հոդված): Մասնավորապես, ծայրահեղ անհրաժեշտության վիճակի բացակայության կամ դրա սահմանազանցման պարագայում անձը ենթակա է քրեական պատասխանատվության, սակայն հանցանքը սպառնալիքի, հարկադրանքի, նյութական, ծառայողական կամ այլ կախվածության ազդեցության տակ կատարելը դիտվում է որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք (ՀՀ քր. օր.-ի 62-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ): Այսպես, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 182-րդ հոդվածով նախատեսված հանցագործության (շորթման) դեպքում սպառնալիքի ազդեցության տակ օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած տուժողի քրեական պատասխանատվության հարցը նույնպես լուծվում է ընդհանուր կանոններով, թեև տվյալ դեպքում նրա նկատմամբ գործադրվող հոգեկան հարկադրանքը կարող է լինել ավելի լուրջ, իսկ իրավիճակը՝ ավելի վտանգավոր, քան կաշառքի շորթման դեպքում: Որպես օրինակ կարելի է պատկերացնել դեպք, երբ տուժողի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնության, այդ թվում՝ սպանության սպառնալիքի ազդեցության տակ նա հանձնում է հանցավորին իր օրինական տիրապետման կամ կառավարման ներքո գտնվող, երրորդ անձին պատկանող գույքը: Տվյալ դեպքում՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակի բացակայության պայմաններում, շորթման ենթարկված անձը հոգեկան հարկադրանքի ազդեցության տակ կատարված իր արարքի համար քրեական պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով: Մինչդեռ, կաշառքի շորթման դեպքում իր օրինական շահերին սպառնացող մվազ ծանր վնասը կանխելու նպատակով հանցանք կատարող կաշառատուի նկատմամբ օրենսդրի վերաբեր-

www.journal.lawinstitute.am

մունքն ավելի մեղմ էր: Մեր կարծիքով, դա արդարացված չէր՝ նկատի ունենալով, որ նույնիսկ հոգեկան հարկադրանքի ազդեցության պարագայում կաշառատուն գրկված չէ վարքագծի ընտրության որոշակի ազատությանից, մասնավորապես՝ կաշառք շորթողի ապօրինի գործողություններին (անգործությանը) այլ կերպ հակազդելու, այդ թվում՝ իրավասու մարմիններին դիմելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է կաշառքի շորթման դեպքում ծայրահեղ անհրաժեշտության վիճակի հնարավորությանը, ապա այդ հարցում քրեագետների դիրքորոշումը միանշանակ չէ: Օրինակ՝ Բ. Վ. Վոլժենկինը բացառում էր շորթմանը ենթարկված անձի՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործելու հնարավորությունը⁵: Այլ հեղինակներ, այդ թվում՝ Ջ. Ա. Թադևոսյանը և Պ. Ս. Յանին, այլ կարծիք են՝ գտնելով, որ պետք չէ ամբողջությամբ բացառել այն դեպքերը, երբ կաշառք տվող անձը չէր կարող այլ եղանակով կանխել օրենքով պաշտպանվող իր շահերի համար վնասակար հետևանքների առաջացումը⁶:

Իսկապես, դժվար է պատկերացնել կաշառատուի համար ծայրահեղ անհրաժեշտության վիճակ առաջացնող կաշառքի շորթման հանգամանքները, սակայն ամեն դեպքում կարծում ենք, որ մման իրադրությունում պետք է դեկավարվել չ՛ք քր. օր.-ի 44-րդ հոդվածում ամրագրված ընդհանուր կանոններով: Ընդ որում, նախկին օրենսդրական կարգավորման պայմաններում մման դեպքերը կաշառք տված անձին քրեական պատասխանատվության չենթարկելը պայմանավորված կլիներ ոչ թե քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ հիմքով, այլ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքով: Նշված ինստիտուտների տարբերությունը կայանում է նրանում, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործող անձի արարքը հանցագործություն չի համարվում, իսկ խրախուսական նորմի ուժով քրեական պատասխանատվությունից ազատվող սուբյեկտի վարքագիծն այնուհանդերձ չի դադարում հանցավոր լինելուց:

Կաշառքի շորթումը որպես կաշառատուին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք դիտարկելու հիմնավորվածությունը վիճելի էր թվում նաև դրա սահմանման նպատակներին համապատասխանելու տեսանկյունից: Այսպես, եթե

կաշառք տալու մասին կամավոր հայտնելու դեպքում հանցավորի նկատմամբ կիրառվում է խրախուսանքի յուրահատուկ միջոց, որը նպատակ ունի խթանելու նրա ակտիվ դրական վարքագիծը արարքը կատարելուց հետո, ապա շորթման ազդեցության տակ հանցանք կատարած և այն թաքցնող կաշառատուին նույն արտոնությունը տրամադրելը, մեր կարծիքով, չէր կարող ծառայել վերը նշված նպատակին: Դեռ ավելին, մեր համոզմամբ, հանցավոր արարքը կատարելուց հետո անգործություն դրսևորելու, կատարվածը թաքցնելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն նախատեսելը կարող էր առաջացնել հակառակ արդյունք, այսինքն՝ խթանել շորթման ենթարկված կաշառատուի պասիվ վարքագիծը, քանի որ տվյալ արտոնությունից օգտվելու համար նրանից հանցանքի բացահայտմանն ուղղված որևէ գործողություն չէր պահանջվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ միշտ հակված ենք եղել այն կարծիքին, որ կաշառքի շորթման փաստն ավելի հիմնավոր է դիտել որպես ոչ թե պատասխանատվությունից ազատելու հիմք, այլ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք՝ չ՛ք քր. օր.-ի ընդհանուր մասի դրույթներին համապատասխան: Այդ տեսակետից կարելի է դրական գնահատել օրենսդրի նոր մոտեցումը, ըստ որի՝ շորթման փաստն ինքնին չի դիտվում որպես կաշառատուին քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմք: Սակայն, մեր կարծիքով, նոր օրենսդրական լուծումը ևս գուրկ չէ թերություններից: Գտնում ենք, որ ի թիվս այլ պարտադիր պայմանների՝ կաշառքի շորթումը նախատեսելը սահմանափակում է վերլուծվող նորմի արդյունավետությունը՝ նեղացնելով դրա ներգործության ոլորտում ընդգրկվող անձանց շրջանակը: Դա իր հերթին չի կարող չզսպել կաշառատուների զգալի մասի հնարավոր ակտիվ վարքագիծը, որի խթանմանն ուղղված է տվյալ նորմը, ինչը կհանգեցնի հանցագործության մասին կամովին հայտնող անձանց թվի կրճատմանը:

Անդրադառնալով խրախուսական նորմի նոր խմբագրության վերլուծությանը՝ կարելի է առանձնացնել դրա կիրառման համար պարտադիր համարվող հետևյալ պայմանները՝ կաշառքի շորթումը, ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում այդ մասին քրեական հետապնդման մարմիններին կամովին հայտնելը և հանցագործությունը բացահայտելուն

աջակցելը:

Կաշառման փաստի մասին հաղորդմանն օրենքով առաջադրվող պահանջներն են կամավոր բնույթը և պատշաճ հասցեատիրոջը (քրեական հետապնդման մարմիններին) ուղղված լինելը: Այդպիսի մարմինների թվին են դասվում քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները՝ դատախազությունը, քննչական և հետաքննչական մարմինները: Հետևաբար, վերլուծվող նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ այլ կազմակերպություններին (օրինակ՝ օրենսդիր, գործադիր իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, մամուլին կամ հասարակական կազմակերպություններին) հասցեագրված հաղորդումն օրենսդրի կողմից չի դիտվում որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք: Համապատասխան հաղորդումը կարող է կատարվել ցանկացած ձևով՝ գրավոր կամ բանավոր, սակայն դա պետք է լինի կաշառատուի ազատ կամարտահայտության, այլ ոչ թե նրա նկատմամբ գործադրված սպառնալիքի կամ այլ հարկադրանքի ազդեցության արդյունք: Այդ կապակցությամբ Ս. Շ. Ծաղիկյանը նշել է. «Կաշառատուի հաղորդումը համարվում է կամավոր, եթե դա արված է իր սեփական կամքով (այլ ոչ թե հարկադրված) և այն հանգամանքի գիտակցմամբ, որ իրավապահ մարմիններին կաշառքի փաստի մասին դեռևս հայտնի չէ»⁷: Հիմք ընդունելով, որ կամավոր հայտնելու շարժառիթներն օրենքով ևս նախատեսված չեն, ենթադրվում է, որ դա կարող է կատարվել ցանկացած շարժառիթով (կատարվածի համար գոյալը, քրեական պատասխանատվությունից վախենալը և այլն): Հարց է առաջանում, թե ինչպես պետք է գնահատվի կաշառատուի հաղորդումն այն դեպքում, երբ կաշառք տալուց հետո կաշառվողը չի կատարել պայմանավորված գործողությունը, իսկ կաշառատուն վրեժխնդիր լինելու նպատակով այդ մասին հայտնել է իրավապահ մարմիններին: Կարծում ենք, որ նման հանգամանքներն ինքնին չեն կարող խոչընդոտել խրախուսական նորմի կիրառմանը, քանի որ դրա օրենսդրական ձևակերպումից չի բխում կամավոր հայտնելու շարժառիթների հետ կապված որևէ սահմանափակում: Այդ կապակցությամբ Ռ.Գ. Գերագույն դատարանի պլենումը պարզաբանել է, որ հանցագործության մասին հաղորդումը (գրավոր կամ բանավոր) պետք է ճանաչվի կամավոր՝ անկախ այն շարժառիթներից, որոնցով

դեկավարվում էր դիմողը⁸: Սակայն, կամավորության հատկանիշը կարող է առկա լինել միայն այն դեպքում, երբ անձը գիտակցում է իր կատարած հանցանքն իրավապահ մարմիններից թաքցնելու հնարավորությունը, այսինքն՝ հարկադրված չէ այդ մասին հայտնել մերկացման անխուսափելի սպառնալիքի կամ որևէ այլ հարկադրանքի ազդեցության տակ:

Ի թիվս վերլուծվող նորմի՝ նոր խմբագրությամբ սահմանված պարտադիր պայմանների՝ հարկ է նշել նաև այն, որ հաղորդումը պետք է կատարվի մինչև այդ մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը: Այդպիսի մոտեցումը, մեր կարծիքով, այդքան էլ հաջողված չէ: Միանշանակ, կամավոր չի կարող ճանաչվել հաղորդումը, որը կատարված է այն հանգամանքի կապակցությամբ, որ իրավասու մարմիններին հայտնի է դարձել տեղի ունեցած դեպքի մասին: Մինչդեռ նոր օրենսդրական ձևակերպումից բխում է, որ խրախուսական նորմի կիրառման հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի միայն կաշառման մասին այդ մարմինների օբյեկտիվորեն իրազեկված լինելու փաստը՝ անկախ մեղավորի կողմից դա գիտակցելու հանգամանքից: Ընդ որում, ըստ քրեական իրավունքի տեսության մեջ լայն ճանաչում ստացած դիրքորոշման, այդ պարագայում վճռորոշ նշանակություն ունի դեպքի մասին իրավապահ մարմինների իրազեկված լինելու վերաբերյալ դիմողի սուբյեկտիվ պատկերացումը⁹: Մեղավորի կողմից այն հանգամանքի գիտակցումը, որ իրավասու մարմիններին հայտնի չէ կաշառման փաստի մասին (նույնիսկ եթե իրականում դա այդպես չէ), հանդիսանում է հաղորդման կամավորության հատկանիշի բաղկացուցիչ տարր: Կարծում ենք, որ նման պայմաններում մեղավորի՝ հանցանքի բացահայտմանն ուղղված նախաձեռնությունը (անգամ եթե որևէ այլ աղբյուրից ստացված տեղեկատվությունն օբյեկտիվորեն նախորդել է նրա հաղորդմանը) արժանի է խրախուսման, և չպետք է բացառվի վերլուծվող նորմի կիրառումը:

Կամավոր հայտնելուց պետք է տարբերել այն իրավիճակը, երբ կաշառք տալու կամ ստանալու առաջարկ ստացած անձն այդ մասին հայտնում է իրավասու մարմիններին մինչև կաշառքի առարկան տալը (ստանալը), որից հետո դա տրամադրվում կամ ստացվում է նշված մարմինների իմացությամբ՝ այդպիսի առաջարկ կատարած անձին

մերկացնելու նպատակով (կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում)¹⁰ : Տվյալ դեպքում անձի արարքում բացակայում են հանցագործության հատկանիշները, քանի որ, կաշառքի առարկան տրամադրելով, նա ի սկզբանե կաշառման մտադրություն չի ունեցել: Այդպիսի անձինք ձեռք են բերում տուժողի կարգավիճակ և իրավունք ունեն հետ ստանալ հանցավորին տրամադրված նյութական արժեքները: Օրինակ՝ ՀՀ Հյուսիսային քրեական դատարանի 08.12.2008թ. դատավճռով (գործ ՀՅՔԲԳ-1/0074/01/08) Ա-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 4-րդ մասով հետևյալի համար. Ա-ն, աշխատելով «Գ-յումբու բնակարանների սպասարկում» ՓԲԸ-ում որպես ժամանակավոր կացարանների բնակիչներին սպասարկող ծառայող, Գ-յումբի քաղաքում տեղադրված Կ-ին պատկանող տնակը հաշվառելու և համարակալելու համար վերջինից շորքման եղանակով (տնակը չհաշվառելու սպառնալիքով) պահանջել է կաշառք: Կատարվածի մասին Կ-ն հայտարարություն է տվել ոստիկանության մարմիններին՝ ներկայացնելով իր մոտ եղած Ա-ի կողմից որպես կաշառք պահանջվող գումարը: Ընթերականների ներկայությամբ կազմվել է արձանագրություն, որտեղ նշվել են դրամական միավորների սերիաները, համարները, որից հետո դրամը հանձնվել է Կ-ին: Այնուհետև ոստիկանության աշխատակիցների իմացությամբ Կ-ն հանդիպել է Ա-ի հետ և հանձնել նրան պահանջվող գումարը, որից հետո անմիջապես վերջինս ձերբակալվել է: Դեպքի առթիվ հարուցված քրեական գործով Կ-ն ճանաչվել է տուժող, և հետագայում գործով կայացրած մեղադրական դատավճռով իրեն են ապացույց հանդիսացող դրամը վերադարձվել է նրան:

Մինչդեռ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված նորմի ուժով քրեական պատասխանատվությունից ազատված անձի կարգավիճակն այլ է, քանզի խրախուսական սանկցիայի կիրառումը չի բացառում արարքի հանցավորությունը, ուստի նա չպետք է ճանաչվի տուժող: Ինչպես պարզաբանում է Ռ.Գ. Գերագույն դատարանի պլենումը, այդպիսի անձինք չեն կարող տուժող ճանաչվել և իրավունք չունեն պահանջել, որ իրենց վերադարձվեն որպես կաշառք կամ առևտրային կաշառքի առարկա հանձնված արժեքները¹¹ :

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասի սկզբնական խմ-

բագրությամբ՝ կատարված հանցանքի մասին կամովին հայտնելուց բացի, ապօրինի վարձատրություն ստացողներին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր պայման էր հանդիսանում նաև ստացածը վերադարձնելը կամ դրա արժեքը հատուցելը: Գ-տնում ենք, որ նման մոտեցումը սխալ էր, քանի որ կաշառքի առարկան նյութական տեսք ունենալու դեպքում պետք է համարվի հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամ կամ այլ արժեք, որի ճակատագիրը պետք է որոշվի ՀՀ քր. դատ. օր.-ի դրույթներին համապատասխան: Նկատի ունենալով, որ կաշառք ստացողի կողմից համապատասխան արժեքները ձեռք են բերվում ոչ միայն նրա, այլև կաշառատուի կողմից կատարված հանցավոր արարքի արդյունքում. ուստի դրանք պետք է տնօրինվեն ՀՀ քր. դատ. օր.-ի 119-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված կարգով (ուղղվեն դատական ծախսերի հատուցմանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ հանձնվեն պետությանը): Ընդ որում, տրամաբանական է, որ տվյալ դեպքում հանցագործությամբ պատճառված վնաս չեն կարող դիտվել կաշառման կապակցությամբ կաշառատուի կրած ծախսերը: Հետևաբար, հիմք ընդունելով, որ կաշառքի առարկան կազմող արժեքները դուրս են գալիս կաշառատուի տիրապետումից վերջինիս կամքով՝ նրա կողմից կատարվող դիտավորյալ հանցանքի հետևանքով, ուստի դրանք մեղավորին վերադարձնելը չի բխում օրենքի պահանջներից: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերով քրեական պատասխանատվությունից ազատված կաշառատուի կարգավիճակը և դրանից բխող իրավական հետևանքները որոշելիս բոլոր դեպքերում պետք է բացառվի կաշառատուին տուժող ճանաչելու և կաշառքի առարկա հանդիսացող նյութական արժեքները նրան վերադարձնելու հնարավորությունը:

Հարկ է նշել, որ վերլուծվող խրախուսական սանկցիան՝ մինչև 2012թ. մարտ ամիսը գործող, սկզբնական խմբագրությամբ տարածվում էր ոչ միայն կաշառատուի, այլև կաշառք ստացողի վրա, որպիսի մոտեցումը համահունչ էր ԱՊՀ երկրների Մոդելային քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի ծանոթագրության 2-րդ մասում ամրագրված դրույթներին¹²: ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածում

ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ

09.02.2012թ. ՀՕ-18-Ն օրենքով կատարված փոփոխության արդյունքում կաշառք ստացողը դուրս է թողնվել խրախուսվող սուբյեկտների շրջանակից: Նշված օրենսդրական լուծումը, մեր կարծիքով, դժվար թե կարելի է հիմնավոր համարել: Նախ՝ ինչպես կաշառք տվողի, այնպես էլ այն ստացողի արարքը համարվում է հանցավոր. այդ երկու տեսակի հանցագործությունները փոխադարձ պայմանավորված են և վնաս են պատճառում նույն օբյեկտին (ընդ որում, որակյալ հատկանիշի առկայությամբ կաշառք տալն ավելի խիստ է պատժվում, քան ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը): Կաշառման նախաձեռնողը կարող է լինել հենց կաշառատուն՝ դրսևորելով ավելի ակտիվ հանցավոր վարքագիծ, քան կաշառք ստացող անձը: Հետևաբար, հաշվի առնելով վերոշարադրյալը և անգամ ընդունելով, որ կաշառք ստացողի արարքի հանրային վտանգավորության աստիճանն ավելի բարձր է, քան այն տվողի, ինչով պայմանավորված է նշված սուբյեկտների քրեական պատասխանատվության տարբերակման անհրաժեշտությունը, այնուհանդերձ գտնում ենք, որ դա չպետք է լինի այդքան կտրուկ: Ուստի, մեր կարծիքով, նմանատիպ հանցանքներ կատարող անձանց անհավասար պայմանների մեջ դնելով՝ խախտվում է արդարության սկզբունքը:

Բացի այդ, կարծում ենք, որ նման մոտեցումը նվազեցնում է խրախուսական նորմի խթանիչ ազդեցության արդյունավետությունը: Այսպես, կաշառք ստացած անձի կողմից այդ մասին կամովին հայտնելու հանգամանքը որպես վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք սահմանելը կարող է ազդել նրա վարքագծի վրա նույն կերպ, ինչպես դա կոչված է ներգործելու կաշառատուի վրա, այսինքն՝ դրդել կաշառված ծառայողին աջակցելու հանցագործության բացահայտմանը: Դեռ ավելին, կաշառման գործընթացի երկու կողմի համար համապատասխան խրախուսանք նախատեսելու դեպքում նրանցից յուրաքանչյուրն այդ հնարավորությունից օգտվելու մեջ ավելի շահագրգռված կլինի, քան միակողմանի առավելության պարագայում՝ գիտակցելով, որ կարող է գրկվել դրանից, եթե մյուսն ավելի շուտ հայտնի իրավապահ մարմիններին տեղի ունեցած կաշառման մասին: Միակողմանի արտոնության պարագայում համապատասխան արդյունքը նվազում է: Բացի այդ, նշված հանգամանքը կարող է

դրդել կաշառատուին՝ չարաշահելու իր արտոնյալ կարգավիճակը՝ անպատիժ մնալու հնարավորության գիտակցմամբ: Տեղյակ լինելով քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմքի առկայության մասին՝ վերջինս կարող է «հանգիստ խղճով» կատարել համապատասխան հանցագործությունը՝ չվախենալով դրա բացասական հետևանքներից, որից հետո սահմանված ժամկետում այդ մասին հայտնել իրավապահ մարմիններին: Նույնը կարող է կատարվել կաշառատուի կողմից նաև այս կամ այն շարժառիթով կաշառվողին վնաս պատճառելու նպատակով, ինչը որոշ չափով նմանվում է կաշառքի պրովոկացիային: Մինչդեռ, կաշառման գործընթացի մյուս կողմի մոտ նույն հնարավորությունների առկայության պարագայում նման վարքագիծը կգսպվեր այդ հանգամանքով, քանի որ տվյալ դեպքում հանցանքի բացահայտման նախաձեռնողը կարող է լինել նաև կաշառատուն:

Այսպիսով, գտնում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունում ամրագրված խրախուսական նորմի նպատակների արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է տարածել դրա գործողությունը նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության սուբյեկտի վրա: Բացի այդ, նույն բովանդակությամբ նորմ հիմնավոր կլիներ ամրագրել նաև ՀՀ քր. օր.-ի 201-րդ հոդվածում:

Անդրադառնալով կամովին հայտնելու համար օրենքով նախատեսված եռօրյա ժամկետին՝ հարկ է նշել, որ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասի նախկին խմբագրությամբ իրավասու մարմիններին դիմելու որևէ ժամկետ նախատեսված չի եղել: Որպես օրինակ նշենք, որ առևտրային կաշառքի հանցակազմը նախատեսող ՌԴ քր. օր.-ի 204-րդ հոդվածի ծանոթագրության համաձայն՝ կաշառք տված անձի կողմից այդ մասին կամովին հայտնելու իրավունքը սահմանափակված չէ որևէ ժամկետով¹³: Այդ կապակցությամբ հարկ է շեշտել, որ, ինչպես հայտնի է, կաշառքը դասվում է դժվար բացահայտվող հանցագործությունների թվին, ինչը պայմանավորված է դրա յուրահատկությամբ: Այն բացահայտելու համար, որպես կանոն, պահանջվում է արագ արձագանք, ուստի դա կատարելուց հետո անհապաղ կամ կարճ ժամանակ անց համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում կաշառման փաստը հայտնաբերելը և ապացուցելը,

մեղավորներին մերկացնելը, կարող է դառնալ անհնար: Ինչպես արդեն նշվել է, քրեական պատասխանատվությունից ազատվելու հատուկ հիմքի ամրագրման հիմնական նպատակը առևտրային կաշառքի բացահայտելիության բարձրացումն է: Մինչդեռ տևական ժամանակ անց կաշառք տալու մասին հայտնելը դեպքերի մեծամասնությունում չի հանգեցնի այն դրական արդյունքին, որն ակնկալվում էր տվյալ նորմի սահմանմամբ, հետևաբար հանցավորին ընձեռվող հնարավորությունը կարճ ժամկետով սահմանափակված չլինելու պարագայում դա իմաստազրկվում է: Այդ պատճառաբանությամբ վերոհիշյալ հարցին ՀՀ օրենսդրի տված լուծումը համարում ենք նախընտրելի:

Միաժամանակ գտնում ենք, որ սահմանված ժամկետից ուշ հանցանքի մասին կամովին հայտնելու դեպքում պետք է հաշվի առնել նաև համապատասխան հաղորդումն ուշացնելու պատճառ հանդիսացած այն հանգամանքները, որոնք զրկել են անձին իրավասու մարմիններին ժամանակին դիմելու հնարավորությունից: Մասնավորապես խոսքը վերաբերում է ոչ թե ցանկացած, այլ միայն այնպիսի խոչընդոտներին, որոնց ուժով անձն ի վիճակի չէր դեկավարել իր գործողությունները (անգործությունը): Նման պարագաներում, մեր կարծիքով, կաշառման մասին կամովին հայտնած անձի վարքագիծը նույնպես արժանի է խրախուսման, ուստի արդարացված կլինեք նրան վերապահել համապատասխան արտոնությունից օգտվելու հնարավորությունը՝ սահմանելով բացառություն ընդհանուր կանոնից: Բացի այդ, գտնում ենք, որ վերլուծվող նորմը պետք է կիրառվի նաև այն դեպքում, երբ անձը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ կաշառման փաստի մասին իրավապահ մարմիններին հաղորդելու նպատակով, սակայն նրա կամքից անկախ հանգամանքներով հաղորդումը հասցեատիրոջ կողմից չի ստացվել:

Ի թիվս կաշառատուին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր պայմանների՝ ՀՀ քր. օր. -ի 200-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության նոր խմբագրությամբ նախատեսվել է նաև հանցագործությունը բացահայտելու անհնարությունը: Մեր կարծիքով, նշված օրենսդրական լրացումը հիմնավոր է և անհրաժեշտ վերլուծվող նորմի սահմանմամբ հետապնդվող նպատակների արդյունավետ իրագործման տեսակետից: Այսպես, կաշառման փաստի մասին հայտնելը, առանց

իրավապահ մարմիններին հետագա ակտիվ աջակցություն ցուցաբերելու, ինքնին բավարար չէ հանցագործության բացահայտման համար: Օրինակ, հանցագործության մասին հաղորդելուց հետո անձը կարող է խուսափել կատարվածի վերաբերյալ ճշմարտացի ցուցմունքներ տալուց, գործով վարույթի ընթացքում իրականացվող դատավարական գործողություններին մասնակցելուց և այլն: Ուստի հիմնավոր է հանցագործության մասին հայտնած անձին առաջադրել լրացուցիչ պահանջներ՝ քրեական պատասխանատվությունից ազատվելու համար, ինչը պետք է խթանի նրա ակտիվ դրական վարքագիծը գործի քննության ընթացքում:

Համադրելով ՀՀ և ՌԴ օրենսդրական կարգավորումները՝ նշենք, որ հանցագործության բացահայտմանը և (կամ) քննությանն ակտիվորեն աջակցելը՝ որպես կաշառատուին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր պայման, նախատեսված է նաև ՌԴ քր. օր. -ի 204-րդ հոդվածի ծանոթագրությամբ¹⁴: Այդ կապակցությամբ որոշ ռուս քրեագետների կողմից կարծիք է արտահայտվել, որ, ի թիվս օրենքով սահմանված հիմքերի, այդպիսին պետք է համարվի նաև կաշառատուի կողմից նրա օգտին կաշառք ստացողի կատարած ցանկացած քննության բարիքները չօգտագործելու փաստը¹⁵:

Այդպիսի դիրքորոշմանը դժվար է համաձայնել: Այսպես, կաշառքի դիմաց կատարված գործողությունների (անգործության) արդյունքից չօգտվելը ոչ միշտ իրագործելի է՝ հիմք ընդունելով, որ նախ դա կարող է չկրել նյութական բնույթ: Օրինակ, պարզ չէ, թե այդ տեսակետից ինչպե՞ս պետք է վարվել այն դեպքերում, երբ կաշառման արդյունքը դրսևորվում է ուսումնական հաստատություն կամ աշխատանքի ընդունվելու կամ, ընդհակառակը, ուսումնական հաստատությունից չհեռացվելու կամ աշխատանքից չազատվելու, այլ աշխատանքի տեղավորվելու կամ կարգապահական խախտմանը չարձագանքելու ձևով: Երկրորդ՝ կաշառվողի կողմից համապատասխան գործողությունները (անգործությունը) կարող են կատարվել ոչ միայն անձամբ կաշառատուի, այլև մեկ ուրիշի օգտին: Եվ վերջապես՝ կաշառքի դիմաց բավարարված շահերը կարող են լինել օրինական. մասնավորապես խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ ապօրինի վարձատրության դիմաց կաշառք ստացողը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դրսևորում է իրավաչափ վարքագիծ:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք շարադրել ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-3.1-րդ¹⁶ մասերով նախատեսված՝ արարք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա կաշառք տալուց կամ ստանալուց հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել է հանցագործությունը բացահայտելուն: Կաշառք տալուց կամ ստանալուց հետո եռօրյա ժամկետից ուշ այդ մասին քրեական հետապնդման մարմիններին կամովին հայտնած անձն

ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե անհաղթահարելի ուժի կամ այլ հանգամանքների ազդեցության հետևանքով նա գրկված էր կատարված հանցագործության մասին ավելի շուտ հայտնելու հնարավորությունից և աջակցել է հանցագործությունը բացահայտելուն:

Կաշառք տալու կամ ստանալու մասին հայտնելը չի համարվում կամովին, եթե դա կատարվել է այն հանգամանքի գիտակցմամբ, որ այդ մասին հայտնի է դարձել քրեական հետապնդման մարմիններին»:

¹ Տե՛ս Գորելիկ Ա.Տ., Շիշկո Ի.Վ., Խլուպինա Գ.Ի. Преступления в сфере экономической деятельности и против интересов службы в коммерческих и иных организациях.- Красноярск, Красноярский гос. ун-т, 1998. С. 198.

² Տե՛ս Курс советского уголовного права. Часть Особенная. Т. 4. / Отв. ред. Н.А. Беляев. Л.: ЛГУ, 1978. С. 304.

³ Տե՛ս Թովմասյան Ա.Թ. Սովետական քրեական իրավունք: Հ.4. Հատուկ մաս: Եր.: Երևանի համալս. հրատարակ., 1983, էջ 192:

⁴ Տե՛ս Лобанова Л., Леонтьевский В. Стоит ли освобождать взяточника от уголовной ответственности? // Российская юстиция 2001, N 11. С. 68.

⁵ Տե՛ս Волженкин Б.В. Постановление Пленума Верховного суда Российской Федерации «О судебной практике по делам о взяточничестве и коммерческом подкупе»: достоинства и недостатки // Уголовное право, 2000. N 4. С. 13.

⁶ Տե՛ս Սարգսյան Գ., Խորհրդունի Ա., Թադևոսյան Ջ., Մինասյան Ա.: Պաշտոնեական հանցագործությունների հիմնական տեսակների քրեաիրավական և քրեագիտական վերլուծություն: Գիտագործնական ձեռնարկ.-Եր.: «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, 2010, էջ 93: Яни П.С. Вред как элемент коммерческого подкупа // Российская юстиция, 2001, N 4. С. 38.

⁷ Տե՛ս Цагикиан С.Ш. Противодействие коррупции в Армении. СПб, Изд-во «Ангарес», 2006. С. 206.

⁸ Տե՛ս Постановление Пленума Верховного суда РФ от 09 июля 2013г. N 24 «О судебной практике по делам о взяточничестве и об иных коррупционных преступлениях», п. 29, с. 12 (Электронный ресурс) // Официальный сайт Верховного суда РФ: Документы Верховного суда РФ / URL: <http://www.supcourt.ru/second.php>

⁹ Տե՛ս Цагикиан С.Ш. Некоторые проблемы правоприменительной практики в контексте реализации международных обязательств // Вектор науки ТГУ. Серия: Юридические науки. 2013, N 1 (12). С. 47.

¹⁰ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» 22.10.2007թ. ՀՕ-223-Ն օրենքի 30-րդ հոդված // ՀՀՊՏ 2007/59 (583), 28.11.2007թ., հոդ. 1198:

¹¹ Տե՛ս Постановление Пленума Верховного суда РФ от 09 июля 2013г. N 24 «О судебной практике по делам о взяточничестве и об иных коррупционных преступлениях», п. 30, с. 12 (Электронный ресурс) // Официальный сайт Верховного суда РФ: Документы Верховного суда РФ / URL: <http://www.supcourt.ru/second.php>

¹² Տե՛ս Модельный Уголовный кодекс для государств-участников СНГ (Электронный ресурс) // МККК: Информационные ресурсы / URL: <http://www.icrc.org/rus/resources/documents/misc/ihl-nat-3.htm>. С. 66.

¹³ Տե՛ս Уголовный кодекс (УК РФ) (Электронный ресурс) // ГАРАНТ: Информационно-правовой портал / URL: http://base.garant.ru/10108000/24/#block_2023

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵ Տե՛ս Лобанова Л., Леонтьевский В. Стоит ли освобождать взяточника от уголовной ответственности? // Российская юстиция, 2001, N11. С. 68.

¹⁶ Սեր կողմից առաջարկվում է լրացնել ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածը 3.1-րդ մասով, որով կնախատեսվի առևտրային կաշառք ստանալը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից: Տե՛ս Դանիբեկյան Ա. Առևտրային կաշառքի համար քրեական պատասխանատվության տարբերակման հիմնախնդիրները // Դատական իշխանություն, 2014, N 6 (180), էջեր 70-71:

Анна Данибекян

Соискатель кафедры уголовного
и уголовно-процессуального права института
права и политики Российско-Армянского
(Славянского) университета

РЕЗЮМЕ

Основания освобождения от уголовной ответственности за коммерческий подкуп

В настоящей статье рассматриваются основные вопросы, связанные с освобождением от уголовной ответственности за коммерческий подкуп в силу специальных оснований, закрепленных во втором абзаце части 5 статьи 200 Уголовного кодекса РА. В статье анализируются социальное значение и цель поощрительной нормы, предусматривающей основания освобождения от уголовной ответственности лиц, совершивших указанное деяние, условия ее применения, а также выявляются связанные с этим актуальные проблемы. На основании вышеизложенного формулируются практические предложения относительно повышения эффективности воздействия анализируемой нормы.

Ключевые слова: коммерческий подкуп, уголовная ответственность, специальные основания, поощрительная норма.

Anna Danibekyan

Post-graduate student of the Chair of Criminal Law
and Criminal Procedural Law of the Institute of Law and Policy
of the Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

The bases to exempt from criminal liability for commercial bribery

This article examines the main issues related to the exemption from criminal liability for commercial bribery under the special bases established by the second paragraph of Part 5 of Article 200 of the Criminal Code of RA. The article analyzes the social meaning and purpose of the incentive norm providing the bases to exempt from criminal liability for persons committing the mentioned act, the conditions of its implementation, and reveals the related actual problems. On the basis of aforesaid there are formulated practical proposals aimed to increase the effectiveness of the analyzed norm.

Keywords: commercial bribery, criminal liability, special bases, incentive norm.